

են աղզի մը բարոյականը բացատրելու՝ որ այնչափ հաշիւ ընելու երկայնամսութեն չունի, և գրեթէ միշտ աղնուական և վեհանձն մղմամք մը կը շարժի: Այս ժողովրդեանս մէջ՝ զոր մէկ կողմանէ կ'ամբաստանեն, և միւս կողմանէ զար մացմամք վրան կը նային, զոր կը զրպարտեն և զոր չմեծարել չեն կրնար, այնպիսի խօսքեր կ'ըսուին և այնպիսի զործեր կ'ըլլուին, որ անտարբերութեամք մոռացութեան մէջ կը թաղուին. և սակայն եռանդին թափը, որ զնոյնը կը զգայ, պէտք էր հոչակեր, որովհետեւ բոլոր մարդկութեան պատիւ կ'ընեն: Թողունք պատերազմներու և մեծ խռովութեանց մէջ ըսուած վսեմ խօսքերը, գիտեմոր եթէ ոչ ոք քեզմէ նուազ մահուընէն կը վախնայ, ոչ ոք նմանապէս քեզմէ աւելի խաղաղութիւն կը սիրէ. զուն, խաղաղասէր Պրահմա, որ առանձնութեն մէջ խաղաղաւէտ առաքինութիւններ կ'ընես, անշուշտ զրեթէ կը սարսափէիր գիտնալու որ ըլլայիր թէ ինչ վսեմ արիութիւն հարկ էր ունենալ տանջանաց առջին զանոնք ըսելու համար: Սակայն մեծաշուք փառքը պատակեց զանոնք՝ որք օրէնսդրական ժողովներու մէջ խօսեցան կամ պատերազմի դաշտին վրայ աշխատեցան: Բայց ազքատին խօսքը ոչ ոք կը յիշէ: Ուրեմն մտիկ ըրէ:

Վերջի ժամանակներս շէնք մը կը նորոգէին որ շատ տարիներէ ՚ի վեր կործանման մօտ էր: Ինչ որ կը վախնային պատահեցաւ. երբ գմբեթին տակ քանի մը գործաւորք աշխատելու հետ էին, շէնքը կործանեցաւ: Անզունդին վրայ առկախեալ գերանի մը վրայ երկու մարդ կեցեր էին. բայց այն գերանը մարդոց ծանրութենէն զարհուրելի կերպով կը հակէր: Մէկը միայն վրան կը նար կենալ, մէկ մը միայն... կամ թէ երկուքն ալ մեռնելու էին: Մէկը շատ երիտասարդ էր, միւսը արութեան հասաւիին մէջ. այս ետքինս իր տղոց յիշաւ տակաւը մնացորդին վրայ կը ցածին չափ կը պղուէր: Բայց անօգուտ տեղ, գերանը երթալով կը հակէր:

վար եղողներն այս խօսակցութիւնը լսեցին. — Պետրոս, կնիկ մը և երեք տղայ ունիմ: — Արդար է, պատասխանեց Պետրոս, և անմիջապէս ինքզինքը վար գահավիժեց:

Ահաւասիկ, հայր իմ, այն երկրին առածներէն մէկ քանին ուր այսպիսի դէպքեր չեն պակսիր:

Դու կը ցածր ըրէ, թող ըլլալիքն ըլլայ:

Գեղեցիկ ծաղկէն պառուղ առաջ կու գայ, ինչ պէս բարի կեանքէ մը պատիւր է:

Հնձեւ ուղղողը սերմանելու է:

Ոչնչ զործ կ'ընէ՝ ոչ որ զործը չիլմընցըներ:

Բարիք մնելով չարը կը յաղթահարի:

Պէտք է բարիք ընեւ և թշլ տալ որ խօսին: Ժամանակը հմուտ վարպետ մըն է որ ուզած նս մեզի կը սորուեցընէ: Այլին ամենէն գէտ անիւն այն է որ միւս կը չունէ:

Բարիք ընելով չարը կը յաղթահարի:

Պէտք է բարիք ընեւ և թշլ տալ որ խօսին: Ժամանակը հմուտ վարպետ մըն է որ ուզած նս մեզի կը սորուեցընէ:

Գէտ բանը ուղղելու համար՝ տունէդ սկիզբն ըրէ:

Զարեք ընելը շատ աւելի կ'արժէ քան թէ բարիք:

Առաքինութիւնն ընտրելագոյն է քան թէ ուժն: Հաւատարմութիւնն ընտրելագոյն է քան թէ դրամը:

Ով որ ինքն իր անձին խմաստուն չէ՝ և ոչ այլոց է իմաստուն:

Աղեկ մեռնիլ ուղղող՝ աղեկ ապրելու է: Լաւագոյն վրէ ժինդրութիւնը՝ թշնամութիւնն արհամարհելն է:

Հն մեղքը նոր ամօթ կը պատճառէ:

Ամենուն ներէ բայց քեզի ոչ երբեք:

Կը շարունակուի:

ԱՏԵՆ ՄԲ ԵՒ ԱՅՍՈՐ

Եթէ մէկն ուղէ աշխատութիւնը յանձն առնուլ ու պատմական յիշատակարանները թղթատել, զարմանքով կը մնայ՝ տեսնալով որ ինչպէս բուն հանգըտութիւնը հին ատեն՝ նաև բարձր վիճակի մարդոց մէջ պակաս էր:

Երկու հարիւր յիշատակար առաջ ձեռնոցները ամենահազուազիւտ էին, և չենրիկոս չորրորդին՝ իրը թագաւորական ընծայ՝ զոյգ մը ձեռնոց ընծայուեցաւ:

Ատեն մը միայն բրդէ գուրպայ կը զործածէին, նաև ամառ ատեն. Գաղ-

դիա՝ ֆրանկիսկոս Առաջին եղաւ առաջին թագաւորը՝ որ մետաքսէ գուրպայ գործածեց. Անդղիա՝ Եղիսաբէթ թագուհին իբր մեծայարգի ընծայ մը զոյգ մը մետաքսէ գուրպայ ընդունեցաւ տիկնոջէ մը:

Լուգովիկոս Ժդին ժամանակը՝ ապուրի պնակները անծանօթ էին: Ապուրը և ուրիշ ինչեիցէ հեղանիւթ ուտելիք, սկըտեղի մը մէջ կը զրուէին երկու հոգւոյ համար:

Բարիզու փողոցայ քարայատակը առջի անգամ 1484ին եղաւ. մինչև այն ժամանակ խոզերը աղատաբար ճամբաները կը պարտէին տղմի մէջ թաւալելով. և ասոր գարմանը չմոտածուեցաւ՝ մինչև որ երիտասարդն Փիլիպպոս թագաւոր՝ ձիէն վար իյնալով սաստիկ վիրաւորեցաւ, ձիուն ոտից մէջ խոզ մը արգիլուելով:

Բարիզու առաջին լուալիքը 1510ին շինուեցաւ:

Վեշտասաններորդ դարուն սկիզբները եղաւ որ այս քաղքիս ճամբաները սկսան գիշեր ատեն ճրագ վառել, երբ քաղքին ոստիկանութիւնը հրաման հանեց որ փողոցին վրայ նայող պատուհաններուն մէջ ճրագ վառուի: Լալտերներով լուսաւորութիւնը հազիւ թէ ԺԸ դարուն վերջերը մտաւ:

Վեշտասաններորդ դարուն ատենները անանկ քիչ էին տան կահկարասիքը, որ երբ թագաւորը՝ վիրաւորուած Քոլինեին տեսնալու գնաց, արկղի մը վըրայ հարկ եղաւ որ նստի: Լուգովիկոս Ժդին թագաւորութեան ժամանակ, հոչակաւոր Ռամպուիկիէ պալատին սըրահներուն մէջ, մեծամեծները գետնի վրայ կը նստէին: Պատերը մերկ էին, և Ռամպուիկիէ մարգիլուհին եղաւ առջինը որ երկնագոյն կերպասով ծածկեց զանոնք: Հայելիք գրեթէ անծանօթ էին. Լուգրի մէջ կատարինէ տէ Մէտիշի հայելին կը պահուի, եթենոսէ շրջանակով և հազիւ 33 հարիւրամեղը բարձրութեամբ:

Հենրիկոս Դին թագաւորութեան ժամանակը մատուցներով կ'ուտէին,

ըստ արդի սովորութեան արևելեայց: Սենեակները ջերմացընելու սովորութիւնոյ չափակի չկար, և գլխաւորապէս անկողնոյ սենեակը և ոչ վառարան ունէր. անգղիական խորհրդարանին համար ալնոյնը զուրցելու է, որ միայն երկու խոշոր գեղնագոյն մոմերու լուսով կը լուսաւորուէին: Իշխանաւորք տաքնալու համար թաթպաններ ունէին՝ որոնց մէջ թեներնին կը ծածկէին. իսկ երբ ցուրտը սաստիկ ըլլար՝ ժողովները կը դադրեցընէին:

ՍԿԻԶԲՆ Ա.ՐԱՐՉՈՒԹԵԱՆ

(Տես երես 90.)

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Ի սմին աւուր յիշատակ է երկրորդ աւուր արարչութեան Աստուծոյ: Յաւուր յորում ասաց Աստուած, թէ Եղիշիցի հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ և ջուրցդ, և եղեւ այնպէս: Յերկրորդումն աւուր բաժանեաց և փեռեկտեաց Աստուած զբազմութիւն ջուրցն՝ որ ծածկեալ ունէր զերկիր. և զկէս ջրոյն յետարեալ հեռացոյց 'ի վեց գիմաց, 'ի վեր և 'ի վայր, յաջմէ և յահեկէ, 'ի գիմաց և 'ի թիկանց: Եւ արար զկապոյտ երկինդ որ ասի հաստատութիւն, և նոյն ձեռքն յամենայն կողմանց ընդգէմ ջրոյն՝ պարզեաց զնա, և պատառեալ պատեցին երկողեանն զաշխարհաւս. և եղեւ այն յօգուտ առ ք իրս: Նախ զի զծանը ութիւն երկրիս թեթևացոյց, և ք. զի զկիզանօղ զօրութիւն հրեղէն երկնիցն արգել փակեաց 'ի վեր: Եւ է հրեղէն երկինն և ջրեղէն կամարն և հաստատութիւնն 'ի վեր և 'ի վայր, և յամենայն կողմանց հեռացեալ յերկրէ, և հողմով խառնեալ ընթանան անդադար, հարթ և զուգակշիռ հաւասար, ոչ տեղի ինչ ձանձաղ, և ոչ տեղի ինչ թանձրագոյն: Եւ այնպէս երեք երկինք հաւասարեալ 'ի շուրջ գան և պատեն զաշխարհաւս, 'ի վեր և 'ի վայր մաղ-